

# Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

**1891 փետրվար** 10 Սուլթան Աբդուլ-Համիդ II-ը կազմակերպեց համիդեական գնդերը (համիդիե):

**փետրվար** 13 Պետերբուրգում կայացավ պետական խորհրդակցություն, որը մշակեց հայ ժողովրդի նկատմամբ ազգային հալածանքն ուժեղացնելու նոր քաղաքականության սկզբունքները:

**մայիս** 1 Ակսեց լույս տեսնել դաշնակցության «Դրոշակ» թերթը:

**մայիս** 27 Կ. Պոլսում մահացավ հայ ականավոր երգիծաբան Յակոր Պարոնյանը: (Ծնվ. 1843թ.-ին, Աղոյիանապոլսում):

**հունիս** 2 Վախճանվեց դերասան Պետրոս Աղամյանը: (Ծնվ. 1849թ.-ին):

**1892 մայիս** 19 Ծնվեց կիմոներասան, կիմոնեմիսոր Յան Բեկնազարյանը: (Վախճ. 1965թ.-ին):

**օգոստոս** 22 Նոր Նախիջևանում մահացավ հայ նշանավոր բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանյանը: (Ծնվ. 1830թ.-ին):

**նոյեմբեր** 4 Վախճանվեց բանաստեղծ և հասարակական գործիչ Խորեն Գալֆայանը (Սար-Պեյ): (Ծնվ. 1831թ.-ին):

**նոյեմբեր** 5 Կ. Պոլսում վախճանվեց հետոր և քաղաքական գործիչ Գարեգին Մրվանձտյանը: (Ծնվ. 1840թ.-ին):

**դեկտեմբեր** 19 Թիֆլիսում վախճանվեց հրապարակախոս, «Մշայի» խմբագիր Գրիգոր Արծրունին: (Ծնվ. 1845թ.-ին, Մոսկվայում):

**1893 փետրվար** 1 Երևանում բացվեց քաղաքային իիվանդանոց:

**1894 հուլիս** 18 Ծնվեց հայ արձակագիր, դրամատուրգ և բանաստեղծ Վահան Թոթովենցը: (Վախճ. 1937թ.-ին):

**օգոստոս** 1 Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը:

**օգոստոս** 22 Կարսի մարզի Յաջիքենոցությունը ծնվեց նավատորմի ծովակալ Իվան Ստեփանի Խսկովը: (Վախճ. 1967թ.-ին):

**սեպտեմբեր** 1 Նշվեց հայ լրագրության 100-ամյակը:

**դեկտեմբեր** 1 Յարատարակվեց «Հայ բանվոր հեղափոխականների» ասոցիացիայի նոր օրգան «Կոհիվ» թերթը:

**1895 հունվար** 1 Մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանների պահանջով Սասուն ժամանեց թուրքական կառավարության քննիչ հանձնաժողովը հայկական ջարդերի պատճառները պարզելու համար:

**մարտ** 7 Սարգիս Կուկունյանն ու նրա ընկերները աքսորվեցին Սիրիի, Սախամին: (Վախճ. 1913թ.-ին, Օրույի տաժանակիրների բանտում):

**մայիս** 11 Կ. Պոլսում Անգլիայի, Ֆրանսիայի և Ուլսաստանի դեսպանները Օսմանյան թուրքիայի կառավարությանը ներկայացրին հայկական վեց վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու ժրագիրը:

**մայիս** 11 Աբդուլ Համիդ երկրորդը հայտարարեց բարենորոգումների ժրագիր, որը ստորագրել էր հոկտեմբերի 18-ին երկրում ծավալվող ընդհանուր զայրությը կասեցնելու համար: Բայց այդ ժրագիրը երբեք չիրագործվեց:

**սեպտեմբեր** 30 Կ. Պոլսում հայոց մայր եկեղեցու բակում հնչայլամերը կազմակերպեցին բողոքի ցույց «Մայհայան ժրագրի» իրագործման պահանջով: Ցույցը կոչվեց Բարը Ալիի ցույցը:

**հոկտեմբեր** 5 Յայերի զանգվածային ջարդեր Բաբերդում, Տրավիզոնում, Ղերջանում, Երզնկայում, Զարսանջակում, Կամախում, Քղում, Ուրֆայում (Եղեսիա), Շապին-Գարահիսարում, Կարինում, Խարբերդում, Սալաթիայում, Սարգվանում, Դիարբեքիրում (մինչև նոյեմբերի 1-ը):

**հոկտեմբեր** 12 Զեյթունում

ապստամբություն բռնկվեց:

**հոկտեմբեր** 17 Ցարական

կառավարությունը ձերբակալեց Ղ. Աղայանին և Ալ. Շիրվանզարեհին:

**հոկտեմբեր** 18 Երկրում ծավալվող ընդհանուր զայրությը կասեցնելու համար սուլթանը ստորագրեց մայիսի 11-ի բարենորոգումների ժրագիրը, որը

**նոյեմբեր** 24 Ծնվեց հայ դերասան Յրաչյա Ներսիսյանը: (Վախճ. 1961թ.-ին):

**նոյեմբեր** 25 Ալավերդու շրջանի Սանահին գյուղում ծնվեց Կոմունիստական կուսակցության և Խորհրդային պետության ականավոր գործիչ Անաստաս Միկոյանը: (Վախճ. 1978 թ.-ին):

**դեկտեմբեր** 8 Կովկասի կառավարչապետը կարգադրեց հայկական ծխական դպրոցները ենթարկել պետական դպրոցական իշխանություններին:

**1896 հունվար** 10 Թիֆլիսում լույս տեսավ «Լումա» ամսագիրը գյուտ ավագ քահանա Աղանյանցի խմբագրությամբ:

**հունվար** 30 Զեյթունի ապստամբությունից հետո հաշտության պայմանագիր կնքվեց ապստամբների, քուրք կառավարության և վեց տերությունների ներկայացնեցիների միջև:

**հունիս** 3 Ակսվեց Վանի հերոսական ինքնապաշտպանությունը:

**օգոստոս** 3 Լոնդոնում կայացավ հնչայլային կուսակցության առաջին ընդհանուր ժողովը, որտեղ արևմտահայ պատգամավորների մեջ նաը հեռացավ կուսակցության շարքերից և ստեղծեց «Վերակազմյալ հնչայլաներ» կուսակցությունը:


**օգոստոս** 14 Կ. Պոլսի Օսմանյան բանկի «Բանկ Օսումանի», գրավումը, որը տևեց 12 օր (մինչև օգոստոսի 26-ը):

**օգոստոս** 27 Յայերի զանգվածային կոտորածներ սկսվեցին Կ. Պոլսում: Տևեց երկու ամիս:

**սեպտեմբեր** 10 Յայերի զանգվածային կոտորածներ սկսվեցին Ակնում:

**նոյեմբեր** 16 Կ. Պոլսում լույս տեսավ «Բյուլանդիին» օրաթերթը Բյուլանդ Քեչյանի խմբագրությամբ:

(Հարուճակելի)



## Լուրեր

### Իրանահայ համայն Անդրէ Աղասին կայցելի Իրան

Ամերիկայի թե՛նիսի ախոյեան, միջազգային մրցումների դափնեկիր Անդրէ Աղասին, որ ծագումով իրանահայ է, ասել է. «Երազում եմ տեսնել Իրանը, որպես իմ արմատների հանգրւած, եւ խոստացել է շուտով ճամբորդել»:

Իրան Աղասին, որ վերջերս ճամբորդել էր արաբական երկրներ, ասաց. «Այս տարածաշրջանում լինելը ինձ իմ արմատներն են յիշեցնում»:

Նշելի է, որ Աղասիի հայրը Մայք Աղասին Իրանի բռնցքամարտի հաւաքականի անդամ է եղել 1956 թականի Օլիմպիական խաղերում:



Իրան:

#### ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ԻՐԱՍԱՐԱՅ ԿԻՆ ԳՐՈՂՈՆԵՐԻՆ

Թեհրանահայ գրական շրջանակի եւ հայ մշակութային «Սիփան» միության նախաձեռնությամբ հինգշաբթի՝ դեկտեմբերի 23-ի երեկոյան ժամը 8-ին սույն միության կենտրոնական սրահում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված իրանահայ կին գրողներին:

Ծրագրում ներառված էին իրանահայ բանաստեղծություններ Ռուբինա Տեր-Բարսեղյանը, Սարոն, արձակագիր Լուսիկ Ստեփանյան-Մելիքյանը եւ մի քանի ուրիշներ, որոնք իրանահայ են, սակայն ապրում են Գերմանիայում կամ ԱՄՆ-ում:

12 բանաստեղծական գրքերի հեղինակ Արշին եւ Ոհնա Գառոննեն, տարիներ է, ինչ հավերժ հեռացել են մեզանից, սակայն նրանց բանաստեղծություններն ու գրվածքները մնալու են հավերժ:

Երեկոն մեծարեց նաեւ իրանահայ գրողներ՝ վաստակավոր ուսուցչուի Նվարդ Ջարությունյանին, որն զբաղվել է նոր սերնդի դաստիարակությամբ եւ գրել պիեսներ փոքրիկների համար, տիկին Արուս Բոհեմյանին, որի գեղարվեստական ստեղծագործությունները (պատմվածքներ եւ մանրապատումներ), գրվել են ֆրանսերեն լեզվով, տիկին Արմենիա Սագինյան-Կարապետյանին, որն իր պատմվածքները գրել է անգլերեն եւ միայն Լեռնին Սասումյանի թարգմանությամբ է հայոց լեզվի վերածվել:

Բարեբախտաբար երեկոյին նախակցում էր Լեռնին Սասումյանը եւ ինքն էլ տեղեկություններ հաղորդեց Արմենիա Սագինյան-Կարապետյանի եւ իր կատարած թարգմանական աշխատանքի մասին:

Անցյալ սերնդի կողքին կան նաեւ նոր, երիտասարդ ուժեր, որոնք դժբախտաբար շատ առիթ ունեն հասարակությանը ներկայանալու: Այդ շարքից էլ մի

քանի բանաստեղծությունները ներկայացրին իրենց ստեղծագործությունները:

Եղան նաեւ թարգմանական ներկայացումները: Դատաքրթական է իմանալ, որ իրանահայ գրիչ շարժող զավակների ջախջախիչ մեծամասնությունը գրում է բանաստեղծություններ, արձակով շատ քերն են զբաղվում: Վաստակավոր ուսուցչուի տիկին Աստղիկ Բաբյանը հանարյա թե միակն է, որ արդեն հասցրել է տպագրել պատմվածքների երկու ժողովածու եւ իր թագմանյա տնօրինության հուշերն ել փորձում է ի մի բերել մի նոր գրիչ մեջ: Նրանցից կարդացվեց «Երկու ճակատագիր» պատմվածքը:

Այս ծրագիրը թվով երրորդն էր 2004 թվականին, որ ծրագրվել էր եւ ի կատար ածվեց Թեհրանահայ գրական շրջանակի եւ Յայ մշակութային «Սիփան» միության միացյալ ջանքերով:

Մեր այս կարգի երեկոներն ու ծրագրերը պիտի գան նոր լույսի դուռ բացելու դեպի մեր մշակույթի եւ ավելի շատ մեր գրականության զարգացման ու պահպանման աջակցություն:

Դրաշալի ասմունքով հանդես եկան հայ մշակութային «Սիփան» միության գրական խմբի անդամները:

ԽԱՉԻԿ ԽԱՉԵՐ, ԹԵՀՐԱՆ

## Իրան

### «ԻՐԱՆԸ ՄՏԱՌԻՐ ՉԵ ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՉԵՆՔ ԱՐՏԱՌԵԼ»

**ՊՈՒՏԻՆԸ ԽՈՐԱՑՄՈՒՄ Է ԻՐԱՆԱԳՈՐԾԱԿցՈՒԹՅՈՒՆԸ  
ԻՐԱՆԻ, ՄԻՀԻԱՅԻ հԵՏ**

Վլադիմիր Պուտինը երեկ Մոսկվայում Իրանի ազգային անվտանգության «Սիփան» միության նախաձեռնությամբ հինգշաբթի՝ դեկտեմբերի 23-ի երեկոյան ժամը 8-ին սույն միության կենտրոնական սրահում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված իրանահայ կին գրողներին:

Ըասան Ռոհամին ասել է, որ Թեհրանը ժամանակավորապես դադարեցնում է ուրանի հարստացման ծրագիրը: Իրանցի բարձրաստիճան պաշտոնյան հաստատել է, որ փետրվարի 26-ին Ռուսաստանն ու Իրանը Բուշերի կայանց օգտագործված միջուկային վառելիքը վերադարձնելու համաձայնագիր են ստորագրել: Բուշերի ատոմակայանը, որի գինը մոտ 1 մլրդ դոլար է, պետք է սկսի աշխատել 2005 թ. վերջին:

«Իրանը մտադիր չէ միջուկային գենք արտադրել, մենք շարունակելու ենք Իրանի հետ համագործակցությունը բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ատոմային էներգետիկայի», ասել է Պուտինը Ռոհամինին: Իր հերթին ԱՄՆ-ը կասկածում է, որ Իրանը մտադրություն ունի Ռուսաստանի օգնությամբ Բուշերում կառուցվող ատոմակայանն օգտագործել միջուկային գենք արտադրելու նպատակով: Թեհրանը բազմիցս ընդգծել է, որ իր ատոմային ծրագիրը կրում է խաղաղ նպատակներ, եւ դա անհրաժեշտ է երկու էներգետիկ խմբիները լուծելու համար:

Երեկ նախագահ Բուշեր, ըստ «Ռոյթերի», զգուշացրել է Իրանին եւ հայտարարել, որ ԱՄՆ-ը կպաշտպանի Խրայելին, եթե Իրանը սպառնա վերջինիս

անվտանգությանը: Ենթադրվում է, որ ռուս-իրանական համագործակցությունը կղաղանա փետրվարի 24-ին Բրատիսլավայում կայանալիք Բուշ-Պուտին համդիպման կենտրոնական թեմաներից մեկը:

Նախօրեին Իրանի փոխանախազահը, Թեհրանում ընդունելով Սիրիայի վարչապետին, հայտարարել էր, որ Իրանը պատրաստ է օժանդակելու Սիրիային եւ արտերկրից սպառնալիքի դեպքուն հանդես գալու միասնական ճակատով: Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Ջարիրի սպանությունից հետո Վաշինգտոնը Դամասկոսից պահանջում է 14 հազարամոց ռազմական ներկայությունը դուրս բերել Մայրիների երկրից, օժանդակել, որպեսզի Լիբանանում առաջիկա խորհրդարանական ընտրություններն անցնեն ազատ եւ արդար, ինչպես նաև երկրի տարածքը չտրամադրել միջազգային ահաբեկչական կազմակերպություններին:

Մի քանի օր առաջ Ռուսաստանը «Խօֆա» տեսակի հրիոներ էր վաճառել Սիրիային: Ռազմական փորձագետների կարծիքով, այս հրիոները հարմար են հատկապես պարտիզանական կրիվների համար:

## Հայաստան

### ԳԵՂԱՍ ՂԱՐԻԲՁԱՆՅԱՆ. «ԻՐԱՍԱՐԱՅ ՐԱՄԱՅՆՔ ԿՅԱՆՔԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՐԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՐԱՆԴԻՍԱՑԱԿ»

ԹԵՂՐԱՍ, ՆՈՅՅԱՍ ՏԱՊԱՏ: Ավարտելով Իրանի Իսլամական Հանրապետությունում իր դիվանագիտական 6-ամյա առաքելությունը՝ Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գեղամ Ղարիբջանյանը մոտ օրերս հրաժեշտ կտա բարեկան հարեւան երկրին ու իրանահայությանը: Դեկտեմբերի 11-ին Հայ նշակութային «Արարատ» կազմակերպության (ՀԱԱԿ) «Վաշիկ Ղարաբեկյան» սրահում Իրանի հայոց երեք թեմերի միասնական նախաձեռնությամբ կայացած երեկոն հրաժեշտ էր դեսպան Գեղամ Ղարիբջանյանին, որին բարի երթ մարդելու էին եկել Սպահանի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Բարկեն Վարդապետ Չարյանը, Աստրապականի թեմակալ առաջնորդ Նշան Թոփուզյանը, Իսլամական խորհրդարանում իրանահայության երկու պատգամավորները, ՀՀ դեսպանատան անձնակազմը, պատգամավորական ժողովների, ազգային մարմինների, միությունների եւ «Ալիք» հաստատության ներկայացուցիչները, հրավիրյալները:

Միջոցառմանը իր առաջին ելույթով է հանդես եկել ՀԱԱԿ Արքեստից միության «Արարատ» երգչախումբը՝ դեկավարությամբ Հայաստանից իրանահայ համայնք հրավիրված արքեստագետ Արաքսյա Խաչատրյանի: Երգչախմբին դաշնամուրով նվազակցել է Ռեթեկս Աշույսյանը: Սեներգով ելույթ է ունեցել Վարուժան Էդգարյանը: Վարդապետից Ասմունքել է Արտուր Զոհրաբյանը: Հանդիսությունը վարել է Ռոբերտ Մարգարյանը: Գեղարվեստական բաժնին հաջորդել է Թեհրանի Հայոց թեմական խորհրդի աստենապետ դոկտոր Ալիս Շովաննիայանի խոսքը, որը, հանդես գալով երեք թեմերի անունից, բարձր է գնահատել Գեղամ Ղարիբջանյանի արգասավոր գործունեությունը: Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանը մոր վախճանման պատճառով բացակայում

էր, ուստի թեմակալ առաջնորդների անունից գնահատանքի խոսք է ասել Սպահանի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Բարկեն Վլոդարյանը: Դեսպան Ղարիբջանյանն իր շնորհակալանքի ու հրաժեշտի խոսքում մասնավորապես ասել է. «6 տարի առաջ, երբ առաջին անգամ ժամանեցի Իրան՝ որպես ՀՀ դեսպան, երեւի կյանքին ամենամեծ հայտնությունը եղավ, երբ տեսա, որ ունենք հզոր ներուժով, հզոր ոգով մի հիմնալիք համայնք, եւ եթե այնժամ ճանաչում էի մի քանի երեւելի իրանահայ անհատների, այսօր, սակայն, հեռանում եմ՝ ճանաչելով բոլորին: Հաջողություն եմ ցանկանում Զեզ բոլորիդ, արեւատություն, եւ շնորհակալություն»:

Երեւոյի պաշտոնական բաժնի ավարտին դեսպանին է հանձնվել արժաքե հուշատախտակ Իրանի հայոց երեք թեմերի կողմից՝ ի գնահատումն իր արդյունաշատ գործունեության: Հուշատախտակի հանձնման պատիվը տրվել է Բարկեն Վլոդարյանին, Աստրապականի Հայոց թեմի առաջնորդ Նշան Վլոդարյանին, Թեհրանի, Սպահանի եւ Աստրապականի թեմական խորհրդների ներկայացուցիչներ դոկտոր Ալիս Շովաննիսյանին: Վերջում կայացել է ընդունելություն, որի ընթացքուն հուշանվեր է հանձնվել նաև ՀՄԱԿ-ի կողմից. այն դեսպանին է հանձնել կազմակերպության կենտրոնական վարչության փոխատենապետ Շենրիկ Խալոյանը: Ինչպես գրում է Թեհրանի «Ալիք» օրաթերթը, 1999 թ. փետրվարից մինչ օրս դեսպան Ղարիբջանյանի գլխավորած դեսպանության դիվանագիտական ու հյուպատոսական առաքելությունները հիրավի շրջադարձային դեր են ունեցել երկու հարեւան երկրների քաղաքական-տնտեսական հարաբերություններուն եւ խրախուսիչ ու խթանիչ նոր լիցքեր են հաղորդել երկու ժողովուրդների եւ ի մասնավորի Հայաստանի հրանահայություն կապերին:

### ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ԱՍՅԱԿԻ ԱՊԹԻԿ ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՒԵՐ

ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՍ ՏԱՊԱՏ: Հայոց ցեղասպանության 90-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը հրատարակության է պատրաստում մի շարք ժողով: Ինչպես «ՆՈՅՅԱՍ ՏԱՊԱՆ»-ի թղթակցին հայտնեց Պատմության ինստիտուտի փոխտնօրեն Գնել Գրիգորյանը, 2005-ին լույս կտեսնի պատմական գիտությունների դոկտոր Ստեփան Ստեփանյանի «Հայկական հարցը, հայոց ցեղասպանությունը եւ Գեղանիան 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին» 400 էջանոց մենագրությունը: Բացի այդ կիրատարակվեն Վոլֆանգ Գուտտերի «Հայերի ցեղասպանությունը» ժողովածուն, որում ներկայացված են գերմանական արխիվների նորահայութ պաշտոնական փաստաթրենը, եւ «Թալեաք Փաշայի դաստավարությունը», որում, ի տարերություն նախորդ իրատարակությունների, գետեղված են նոր փաստաթրեն: Գ.Գրիգորյանը տեղեկացրեց նաև, որ 2005թ.-ին ընթերցողներին կներկայացվի պատմական գիտությունների թեկնածու Վարուժան Պողոսյանի «Հայոց ցեղասպանության լուսաբանումը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին՝ ֆրանսիական պատմագրության եւ հասարակական մտքի կողմից» մենագրությունը: Ըստ ինստիտուտի տնօրենի, գալիք

# Հոգու Կրկնարարագործություն

տարի նախատեսվում է հրատարակել նաեւ ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանի «Դայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում» աշխատության երկրորդ հատորը:

## Գյումրիի նավթի արտահանման հեռանկարային տարածք

**ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ)** - Օգտակար հանածոներից գորուկ Գյումրու տարածքն այսօր համարվում է նավթի արտահանման հեռանկարային տարածք: Այս եզրակացության է հանգել ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտը, տեղեկացնում է «Արմենպրեսը»: Եթե սրանից 45 տարի առաջ կատարված ուսումնասիրությունը չտվեց անհրաժեշտ արդյունքը, ապա այսօր դրա համար կան բոլոր հիմնավորությունը: Կարսի տարածքում նավթի հայտնաբերման տվյալները ենթադրել են տալիս, որ Գյումրու տարածքում նավթի հնարավոր պաշարներ կան:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի առաջարկով տարածաշրջանում Երկրաբանական հետազոտություններ կատարելու նպատակով ՀՀ կառավարությունը հատկացրել է մոտ 160 մլն դրամ: Ծրագրով նախատեսված է տարածաշրջանում միայն Երկրաբանական հետազոտություններ իրականացնել, հրատարակած աշխատանքներ չեն նախատեսվում: Իրականացվելու են տարածքի հողաշերտի եւ ստորգետնյա ջրերի Երկրաբիմիական ուսումնասիրությունները: Հետազոտությունների համար հիմք են ծառայելու տարածքի Երկրաբանական օրինաչփությունները եւ մինչ այդ կատարված ուսումնասիրությունները:

Ուսումնասիրությունները կատարվելու են Երկու փուլով: Դրանք նախատեսված է սկսել ապրիլին եւ ավարտել մինչեւ տարեվերջ: Հետազոտությունների դրական արդյունքների դեպքում եզրակացությունները կներկայացվեն Միջազգային գարգարման բանկ՝ հետագայում արտահանման աշխատանքների ֆինանսավորման համար:

Նավթի եւ գազի հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքներ Հայաստանի տարածքում կատարվել են դեռ 60-ական թվականներին: Այդ ժամանակ նավթի եւ գազի հնարավոր տարածքներ են համարվել Արարատյան դաշտավայրը, Գառնիի տարածքը եւ Գյումրու մերձակայքը:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԹՈՒՐՖԱԿԱՍ «WELLA» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՏՈՐԵՂԵՆԻ ԵՎ ՂԱԳՈՒՏԵՂԵՆԻ ՑՈՒՅԱՆԱՌԵՍ-ՎԱճԱՐԸ

ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանում առաջին անգամ բացվեց թուրքական «Wella» ընկերության կտորեղենի եւ կանաց հագուստեղենի ցուցահանդես-վաճարը: Կառավարության ընդունելության տան ճենասրահում անցկացվող ցուցահանդեսում «Wella»-ն Երկայացրել է իր արտադրած կտորեղենը եւ դրանից պատրաստված հագուստներ:

«Wella»-ի նախագահ, քաղաքական գործիչ եւ խոշոր ձեռնարկատեր Զոշրուն Քափիլանը հայտնեց, որ Թուրքիայում նա իր հնարավորությունների ներածի չափ կնպաստի հայ-թուրքական սահմանի բացնանը, ինչպես

նաեւ Հայաստանի եւ Թուրքիայի գործարարների համագործակցությանը: Ընկերությունը նպատակ ունի 3 խանութ բացել Երևանում: Ցուցահանդես-վաճարը տեւելու է 2 օր:

## ԳԼԵՅՆԵՅՅՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԱՊ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՅՈՒՅՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱԱՊ-ում եւ Կանադայում հայկական ապրանքների իրացման ծավալների ավելացմանն օժանդակելու նպատակով դեկտեմբերի 14-ին Գլեյնեյլում (ԱԱՍ, Կալիֆորնիա) բացվել է Հայաստանի Արևետրա-արդյունաբերական պալատի (ԱԱՊ) ներկայացուցչությունը: Ինչպես «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակցին հայտնեց ԱԱՊ-ի գործադիր տնօրեն ՍամՎել Հովհակիմյանը, մինչ այժմ այդ երկներում հայկական արտադրանքը իրացվում էր սպառողների նեղ շրջանակում՝ հիմնականում հայկական համայնքում: Ներկայացուցչության գործունեությունը հնարավորություն կտա ընդլայնել այդ շրջանակները եւ սպառման ծավաները: Ներկայացուցչությունը նպատակներից է լինելու իրացման շուկաների ուսումնասիրությունը, գործարար նոր կապերի հաստատմանն օժանդակությունը, ինչպես նաեւ օտարերկյա ներդրումների ներգրավումը Հայաստան: Ս. Հովհակիմյանը հայտնեց, որ Եվրոպական Երկրներում հայկական արտադրանքների իրացմանն օժանդակելու նպատակով արդեն մի քանի ամիս է, ինչ Հայաստանի ԱԱՊ-ի նախաձեռնությամբ Հովհակիմյանը բացվել է ԱՊՀ երկների բիզնես-պլադրամ: Այնուղիւ հավաքագրվում են տարբեր արտադրատեսականու Եվրոպական պատվերները եւ արտադրող ընկերությունների տվյալները: Բիզնես-պլադրամին կից կկառուցվի նաև Արևետրային կենտրոն՝ հյուրանոցային համալիրով: 50-ական տեղով 4 հյուրանոցներից կազմված համալիրը հիմնականում կապասարկի ԱՊՀ երկների գործարարներին:

## Միջազգային

### ՀԱՅԱԶԳԻ ԲՈՆՑՑԱՄԱՐՏԻԿԸ ՀԱՂԹԵԼ Է ԱՇԽԱՐԴԻ ՉԵՄՊԻՈՆԻՆ

ԹԱԼԱՐԱՍԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Դեկտեմբերի 16-ին ԱԱՍ Ֆլորիդա նահանգի Յոլիվուդ քաղաքում տեղի ունեցած նարտում հայազգի մարզիկ Վիք Դարչինյանը 11-րդ ռաւնդրում տեխնիկական նոկատուի է Ենթակել Բնագթամարտի միջազգային ֆեդերացիայի (IBF) թերեւ բաշայինների գործող չեմպիոն Այրեն Պաչեկոյին:

«Ասոշիերեդ փրես»-ի հաղորդման համաձայն, Ավստրալիան ներկայացնող Դարչինյանն ավելի ակտիվ էր ամբողջ մարտի ընթացքում եւ 10-րդ ռաւնդրում կարողացել է կոլումբացի տիտղոսակիր հակառակորդին հասցել շեշտակի հարված, որից վերջինս այդպես էլ չի կարողացել ուշքի գալ: 11-րդ ռաւնդրում Դարչինյանը շարունակել է ճնշում գործադրել, հասցրել է եւս մեկ նոկատու, եւ ռաւնդի ավարտից 44 վայրկյան առաջ

Պաշտոնի մարզիչը դատավոր Խորիսէ Ալոնսոյին խնդրել է դադարեցնել մենամարտը:

Պաշտոնի համար, որը պորֆեսիոնալ բռնցաքարտում տարել է 31 հաղթանակ եւ 7 անգամ հաջողությամբ պաշտպանել չեմպիոնի տիտղոսը, սա առաջին պարտությունն էր:

## ՀՈՇՄԻ ՊԱՊԸ ՕԾԵԼ Է Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՐՈՒՇԱՐՁԱՆԸ

ՎԱՏԻԿԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏՄՊԱՆ: Հոռմեական կարողիկ Եկեղեցու քահանայապետ Հովհաննես Պողոս Բ Պապը հունվարի 19-ին բացել եւ օծել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի արձանը, որ դրվել է Վատիկանում, Սուրբ Պետրոսի տաճարի արտաքին որմնախորշում:

Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունելու 1700-ամյակի կապակցությամբ Հայ կաթոլիկ Եկեղեցու Սերսես Պետրոս մթ պատրիարքը Ա. Գրիգոր Լուսավորչի հուշարձանը դնելու խնդրանքով դիմել էր Հովհն Պապին: Քահանայապետը բավարարել էր պատրիարքի խնդրանքը, եւ հունվարի 14-ին մարմարե քանդակը՝ 5,7 մետր բարձրությամբ եւ 26 տոննա քաշով, տեղադրվել է նրան հատկացված տեղում:

Հուշարձանի հեղինակը Փրանսահայ քանդակագործ Խաչիկ Գագանճյանն է: 2000 թվականին Հովհաննես Պողոս Բ Պապը Վատիկանում Ամենայն հայոց Գարեգին Բ կարողիկոսին է հանձնել Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները, որ այժմ գտնվում են Երեւանի Մայր տաճարում:

## Հասարակական

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ «ՔՐՈԱՑԱԾ» ՈՒ «ԹՐԹԱՑԱԾ» ԶԱՎԱԿՆԵՐԸ

Մինչեւ Վերջերս Թուրքիայում տարու էր գոելք քենալիզմի տարիներին բռնի թրքացած ու քրդացած հայերի մասին, որոնք այսօր, ինչպես Արեւմտյան Եվրոպայի իրենց բնակության երկրներում, այնպես էլ Արեւմտյան Հայաստանում ու Կիլիկիայում ինքնաճանաչման զարդոնք են ապրում: Համշենահայերից հետո, մասնավորաբար Սարունի, Մուշի, Տարոնի «խլանացած», «քրքացած» ու «քրդացած» հայերի հետ արդեն կարելի է զրուցել իրենց անցյալի ու ներկայի մասին, երբ թռափելով իրենց «դիմակ» անունազգանունները, փորձում են վերադառնալ հայության գիրկը, Թուրքիայի զանազան փորամասնությունների հետ պայքար ծավալել իրենց իրավունքների պահպանան համար, իշել ցեղասպանության ենթակված իրենց պատերին:

Այսօր հայության գիրկը վերադառնող այդ վերապրողներին կարելի է հանդիպել ինչպես Գերմանիայում, այնպես էլ Հայաստանում, մանավանդ Իրաքում եւ Թուրքիայի սահմանամերձ շրջաններում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձություններից հետո: Ոմանք, որպես «քրդացածներ», պայքարել են ՊKK-ի (Քրդական քանդակական կուսակցություն) շարքերում եւ Օջալանի գերեվարությունից հետո, հիհարափելով եւ արդեն ինանալով, որ իրենք հայեր են, որոշել են վերադառնալ մայր հայրենիք կամ մեկնել Գերմանիա, որտեղ

քաղաքական եւ ազգային աշխատանքի լայն դաշտ կա Թուրքիայից արտագաղթած փոքրանասնությունների առկայության պատճառով՝ Ֆրանկֆուլտում, Վիսբադենում, Շտուտգարդում, Մայնցում եւ այլուր:

- Ծնվել են Տարոնի Կարմիր խաչ (Կազմ Աղա) գյուղում: Մենք Մեծ Եղեռնից վերապրել ենք, որովհետեւ առերես մահմեդական բրյունն ենք ընդունել, մանավանդ որ քրդախոս ենք: Հայրս ու Եղբայրներս թուրքական ֆաշիզմի դեմ պայքարելու համար դարձել են ՊKK-ի մարտիկներ, բանտարկվել ու տառապել են բազմից: Այստեղ՝ Գերմանիայում երկար ժամանակ աշխատում ու սովորում են, լայն կապեր են պահպանում հայկական համայնքի եւ առաջադիմական շարժումների հետ: Խակ Արեւմտյան Հայաստանում, մանավանդ հայկական ու բռնի թրքացած-քրդացած Վարդու պավանում, ուր 60-ական թթ.-ին երկրաշարժ է եղել, ապրում են մեր հարազատները, որոնք բազմաթիվ արհավիրքների միջով անցել ու անցնում են, - պատմում է այսօր վերստին հայացած Սիմոն Կոստանյանը (Սարդետ Կոստուն):

Կիլիկիայի Աղիամանի շրջակա գյուղերից մեկում ծնված Ռազմիկ Հակոբյանն էլ (Խորեղին Յագուր) երկար տարիներ պայքարել է ՊKK-ի շարքերում, ծերքակալվել ու բանտարկվել է Անկարայի սարսափազդու բանտերում: Գրող ու կինոռեժիսոր է, այժմ փորձում է նկարահանել իր ինքնությունը կորցրած արեւմտահայ պանդուխտի կյանքը արտասահմանում:

«Ծնողներս թաքցնում էին մեր ինքնությունը, մանավանդ

որ հայ կոչվելը Աղիամանի շրջակայքում աններելի

անարգանք ու հանցանք էր... Զնայած դրան, թրքացած-

քրդացած հայերից շատերը «գյավուր» էին կոչվում:

Ֆիլմը, որը փորձում են Անկարահանել, հայ տառապյալ

վտարանդու մասին է, նաև արեւմտահայ վերապրողների

ողիսականն է: Այն իրականացնելու են Հայաստանում

անհրաժեշտ աջակցություն գտնելու ու դեպքում,

Արեւմտյան Եվրոպայի մեր գաղափարակից եղբայրների

օժանդակությամբ», հայտնում է բազմաչարչար

Ռազմիկը:

Այսօր հազարների է հասնում մանավանդ Սասունի ու

Մուշի երեմնի կորուսյալ, այժմ իրենց արմատներին վերադառնող հայերի թիվը:

«Այսօր Մուշում շուրջ 1000 հայեր են ապրում: Քրդական

հարցերի պատճառով թուրքական կառավարությունը մեզ

ժամանակավորապես հանգիստ է թողել: Ժամանակին

հայերին կոտորած քրդերի զավակներն անընդհատ մեղա

են գալիս ու ներողություն խնդրում իրենց հայրերի

ոճիրների համար», ասում է նշեցի Արմենը, որը հաճախ է լինում Հայաստանում, իր ազգակիցների մոտ:

**ԴԱՍՈ ՍՈՍԿՈՅՅԱՆ, ՎԻՍՐԱԴԵ-ՄԱՐՍԵ**

**ՄԻ ԲՈՒՌ ԽԱՅՍՊԱԾԸ ՈՒՂԻՆԵՐ**

**ՆԻՐԱՆՔ ՄԵՂԱՀԱՆՎԵԼ ԵԲ ԱՐԴՐԵԶՈՒՄԻՋ ԵՒ  
ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԽԱՍՈՎԱՏԵԼ ՆՔՐԵՐԻ ԱԶ ԱԿԻՆ**

68-ամյա Արշալույս Մովսիսյանը Արդրեզանի Գաբրալայի (Նախկինում՝ Կուտկաշեն) Նիժ գյուղում թողել է իր քոջ եւ եղբոր երեխաներին՝ 11 ընտանիք: «Սիրոս կտոր-կտոր է լինում, ուզում են նրանց դեմքը տեսնել», լացը կոկորդում խեղդում է նա:

Տիկն Արշալույս ազգությամբ ուղի է, սակայն 1988-ին

տեղահանվել է Արդրեզանից, քանի որ ամուսինը հայ էր:

«Անուսինս նահացավ Դեբերավան գալուց 3 տարի հետո:

Մեր նախնիները թաղված են Արդրեզանում», ասում է նա:

# Հոգևոր Արքայի առաջարկելութեան

Նոյեմբերյանի շրջանի (Տավուշի մարզ) Դեբեհավան գյուղում ուղիների 3 ընտանիք է հաստատվել: Եվս 7 ուղիներ հաստատվել են Բագրատաշենուն, եւ 2 կամ 3-ը՝ Յանդիպել նաեւ Յայաստանի այլ բնակավայրերում եւս, նրանց մեջ, ովքեր տուն-տեղ թողել եւ հեռացել են Աղրբեջանի Վարդաշենի (այժմ Օղուզ) եւ Կուտկաշենի շրջաններից:

Ովքե՞ր են ուղիները: Պատմական Աղվանքի (1-9-րդ դդ.) ժողովուրդներից են եղել ուղիները: Լեզգիներին ցեղակից կովկասյան այս ժողովրդի լեզուն ուղիներն են: ԽՍՀՄ ժամանակներում ուղիները բնակվում էին 3 գյուղերում՝ Նիժում, Վարդաշենում (այստեղ գերազանցապես հայեր էին բնակվում) եւ Արեւելյան Վրաստանի Օկտեմբերի գյուղում, այս բնակավայրը հիմնել են Վարդաշենից հեռացած ուղիները 1922 թ.:

Ղարաբաղյան պատերազմն ուղիներին ցաքուրդիվ արեց ամբողջ աշխարհում, թեւ նրանք ազգակցական որեւէ կապ չունեն ոչ թուրքախոս ադրբեջանցիների, ոչ էլ հնդեվրոպացի հայերի հետ: Պարզապես դեռ 5-րդ դարում ուղիներն ընդունել էին Յայ առաքելական եկեղեցին, իսկ ժամանակի ընթացքում իրենց հայրենի ուղիներն ինտ հավասարապես գործածել են նաեւ հայերենը, ընդունել հայկական ավանդույթները, նիստուկացը, ընդունել հայկական ազգանունների վերջին «յան»-ը: Ուղիների մեջ ամենատարածված ազգանուններն են Ղալաքյանը, Կուրանյանը, Ֆալյանը, Գուկասյանը, Սուլրայիանը: Ժամանակակից ուղիներն ունի երկու բարեր՝ Վարդաշենի եւ Նիժի:

«Մենք էլ հայերի նման խաչապաշտ ենք, ունեցել ենք եկեղեցիներ: Մենք Աղրբեջանում թուրքին աղջիկ չենք տվել, նրանից աղջիկ չենք արել, որովհետեւ խաչապաշտ ենք: Յայի պես սպիտակ շորերով, քաց երեսով հարս ենք բերում, նոյն ձեւով պարուն ենք, մահացածներին թաղում հայկական ծեսով: Բացի լեզվից, մենք հայերից այլ բաներով չենք տարբերվում», ասաց Արշալույս Սովորյանը:

Արգու Ղարգիյանը, որը ուղի է մորական կողմից, հիշում է, որ Աղրբեջանում իրենք պաշտել են նաեւ սուլր ծառերը: «Մեր այգում ընտրել ենք որեւէ պտղատու ծառ, պաշտել, շուրջը մատաղ արել, մոյն վառել: Մենք իրավունք չունեինք բարձրանալու սուլր ծառը, քառել պսուղները: Երբ բերքը թափվում էր, այն ժամանակ էինք ուտում», ասում է Արգուն:

Բագրատաշենում է հաստատվել Ռոզա Ղազարովան, ուս ամուսինը՝ Ալեքսեյ Ղազարովը, ես ուղի է եւ արդեն քանի տարի օրվա հայ է աշխատում Սաղախլոյի շուկայուն: «Ուղիներին էլ էին քշում, ասում էին դուք էլ եք հայ: Մենք փախել ենք, ամեն ինչ թողել այնտեղ: Եթե ընտանիքում ամուսիններից մեկն ու մեկը հայ էր, քշել են Աղրբեջանից», ասում է Ռոզան:

1989 թ. մարդահանարի տվյալներով, Աղրբեջանում բնակվում էին 7971 ուղիներ: Նիժում մնացել են 4500 ուղիներ, ամբողջ աշխարհում այսօր ուղիների թիվը չի գերազանցում 10 հազարը: Բնականաբար, Նիժում բնակվողներն ազգանվան «յան» վերջավորությունը փոխել են, սակայն չեն մոռացել հայերենը: Վարդաշենում մնացել են մի քանի տասնյակ ուղիներ, որոնք եւս խոսում են հայերեն, իսկ վրացական Օկտեմբերի գյուղում բնակվողները խոսում են ուղիներեն եւ Վրացերեն:

Ժամանակական 43 տարեկան է, գաղթել է Նիժից, հաստատվել Բագրատաշենում, ամուսինը հայ է: «Ես մաքուր ուղի եմ: Ին եղբայրը՝ Օլեգը, եւ իմ մյուս բարեկամները բնակվում են Նիժում», ասաց ժամանակ եւ

համոգելու համար, որ հրաշալի գիտի մայրենին, մեկ նախադասություն ասաց ու թարգմանեց. «Չու ուղիզու: Յան տիտերյան Աղրբեջանախուն» (թարգմ.՝ «Ես ուղի եմ, փախել եմ Աղրբեջանից»):

Դեբեհավանում, Բագրատաշենում եւ Յաղթանակում հաստատված մի քանի տասնյակ ուղիները եւ Յանատանի այլ բնակավայրերում ցրված նրանց եւս մի քանի տասնյակ հայրենակիցները մինյանց հետ կապ չեն պաշտպանում: Ծիշու է, երբ, օրինակ, հարսնիքի կամ քաղման արարողություն է լինում, Նոյեմբերյանում հաստատված ուղիները անմիջապես առանձնանում են, որպեսզի, ինչպես ասում է ժամանակ, «մինյանց հետ ուղիներն խոսելու հնարավորությունը չկորցնեն»:

Արզու Ղարգիյանն ասում է, որ Աղրբեջանում մնացած իրենց բարեկամները շատ վատ են ապրում: «Մորաքրոջ աղջիկը ԱՍՍ քաղաքացի է: Անցած ամռանը զնացել էր Նիժ, նրան նեղել էին Բարքի օդանավակայանում, քանի որ ազգանունը հայկական է»: Արզուն ասում է, որ դժվարություն չկա Վրաստան անցնելու եւ այնտեղ հանդիպելու իրենց բարեկամներին: Սակայն, Արզուի ասելով, աղրբեջանցիներն ուշադիր հետեւում են Նիժում բնակվող ուղիներին: Նա հիշեցրեց, որ մի քանի տարի առաջ Բագրատաշենում բնակվող ուղիներից մեկի բարեկամը Նիժից Վրաստանով անցել էր Յայաստան՝ հանդիպելու քրոջը: Աղրբեջանի հատուկ ծառայություններն իմացել էին այդ մասին եւ Նիժ վերադառնալուց հետո նրան եւ որդիներին նեղություններ պատճառել:

Ուղիներին համարում են պատմական թատերաբեմից հեռացված Աղվանք պետության հետնորդներ: Նրանք դասվում են աշխարհի այն ժողովուրդների շարքում, որոնց ինքնությունն ապագա տասնամյակներում վտանգված է: «Իմ եղբայրն ընտանիքով բնակվում է Ուկրաինայում, նրա երեսաներն արդեն չգիտեն ուղիներն: Ուստատանում, ԱՍՍ-ում, այլ երկրներում հաստատված ուղիների նոր սերունդը չգիտի մայրենին: Մեր ազգը հետզինետե քշանում է», ասում է ժամանակայանը:

ԹԱԹՈՒ ՂԱԿՈՐՅԱՆ,  
Աղրեղավան-Բագրատաշեն-Երեւան

## Մշակութային

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՍ ՆՈՐ  
ՏԱԿԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԿԻՐԱԾԵԼԻ ԿԼԻՆԵՍ ՄԻ  
ՔԱՆԻ ԱՍՍԻՑ**

Հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի կապակցությամբ «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամն իրականացնում է «Յայկական համակարգչային նոր տառատեսակներ» ծրագիրը: Ծրագրի գեղարվեստական դեկավար Ռուբեն Յակոբյանի (Թառումյան) ասելով, ստեղծվում են ժամանակակից որակյալ տառատեսակներ, որոնք հնարավորություն կտան գրելու նաեւ հունարեն, արաբերեն, եբրայերեն եւ այլ լեզուներով: Ներկա դրությանը մշակվում է տառատեսակների բլոկը, որը թույլ կտա դրանք օգտագործել ցանցային միջավայրում, կայքերում եւ փաստարդերում: Դա լրացուցիչ հնարավորություն կտեղի հայ մշակույթն անցկացնելու համակարգչային եւ ինտերնետային հենքի վրա:

# Հոգևորականութեաբ

«Ինտերնետում հայերեն կայքերը չափազանց քիչ են, կարելի է ասել՝ այսօրվա վիճակով հայերենը ինտերնետում գրեթե գոյություն չունի, եղածը կարելի է միայն մանկական խաղ համարել։ Ել ավելի քիչ է ժամանակակից UNICODE կոդավորմամբ կայքերի թիվը։ Այստեղ կա մի լուրջ խնդիր հայ մշակույթը շուկայական հետաքրքրություն չի ներկայացնում ծրագրեր արտադրող ընկերությունների համար։ Հենց այդ պատճառով հայերենի խնդիրը երկար ժամանակ անլուծելի էր, հարցն այնքան էր հասունացել, որ վերջապես արեւմտյան ընկերությունների ծրագրերում հասավ եւ հայերենի հերթը եւ ստեղծվեց որոշ հայերեն օժանդակում՝ առանց մեր մասնագետների մասնակցության ու մեր փոխարեն սկսեցին անել այն, ինչ մենք էինք պարտավոր անել։ Ֆիշու է, սկզբունքները, որոնցով նրանք փորձել են լուծել հայերենի խնդիրները, այնքան էլ չեն բավարարում մեր պահանջներին, բայց եղածի համար էլ պետք է շնորհակալ լինենք։»

Իբրևու օրինակ նա նշում է «Մայլրոսոֆտ» ընկերության «Վինդոուզ» համակարգում ստեղծած հայերեն օժանդակումը, որով «Վորդ» ծրագրում գրում ենք հայերեն, բայց մյուս ծառայություններից օգտվել չենք կարող, քանի որ ամեն ինչ արված է կիսագրագետ ձեւով։ Օրինակ, առաջարկվում են հայերեն ստեղնաշարերի ստեղների 2 դասավորություն, որոնցից մեկը կոչվում է արեւմտյան հայերեն, մյուսը՝ արեւելյան։ Սակայն պրոֆեսիոնալ որակ չունեն, ստեղծված են ոչ գրագետ սկզբունքով։ Մինչդեռ արդեն 100 տարի գոյություն ունի հայերեն գրամեթնայի գրագետ կառուցված ստեղնաշարը։ Մի խոսքով, եղած համակարգերը կամ կիսատ են, կամ անհաջող։ Դրա պատճառներից գլխավորը նա համարում է այն, որ Հայաստանում ժամանակից ընթացքում չստեղծվեց այդ խնդրով մասնագիտորեն գրավվող կազմակերպություն, որը ծրագրեր արտադրող միջազգային ընկերությունների հետ կապեր հաստատելով հայերենը լիարժեք կներկայացներ ժամանակակից ծրագրային բոլոր համակարգերում։ Ի տարբերություն մեզ, փորբարիկ շատ ազգեր, ինչպես օրինակ՝ Էստոնացիները, արդեն ստեղծել են մայրենի լեզվով «Վինդոուզ», մինչդեռ մեզանում ընդամենը փորձ է արվում ստեղծելու այդ ծրագրից հայացնող համակարգ։ «Չեն կարծում, որ որեւ էստոնացի հրաժարվի համակարգչային ծրագրերը էստոներեն ունենալուց։ Հայերիս մեջ այլ պատկեր է։ Նույնիսկ ամենաբարձր մակարդակներում անտարեր նույնեցուն է դրսեւորվում, շատերը նույնիսկ սկզբունքորեն դեմ են հայերեն ծրագրեր ունենալուն, պատճառաբարնելով, թե իբր անգերենով աշխատելու օգնում է լեզվին տիրապետելուն։ Այս այսօր նույնիսկ ուղղագրիչ ծրագիր չունենք։ Սա խոսում է ազգային պատվերի բացակայության մասին։ Օրինակ, իհմա էլ կարելի է էլ-փոստով հայերեն նամակներ գրել, սակայն մեծ մասը չգիտի, իմացողն էլ չի ուզում օգտվել այդ հնարավորությունից։ Այս երեւութը խիստ անհանգստացնող է, նշում է նա։»

Մասնագետների գնահատմամբ, թեպես անգերենը համարվում է գերիշխող լեզու, սակայն նկատվում է ազգային լեզուներով բովանդակության աճ։ Որպես օրինակ կարելի է բերել ոչ միայն ռուսերենը կամ չինարենը, այլևս լեհերենը, շվեդերենը, նորվեգերենը եւ շատ ուրիշներ։

«Հայկական համակարգչային նոր տառատեսակներ» ծրագրի շրջանակներում ստեղծվող տառատեսակները, ամենայն հավանականությամբ, պատրաստ կլինեն

աշնանը, հայոց գրեթի 1600-ամյակի տոնակատարության ժամանակ։ Արդեն ստեղծվել է տառատեսակների ավելի քան 20 նկարվածք, որոնք խմբավորվում են տարրեր ընտանիքների մեջ՝ արիել, տահոնա, կուրիեր եւ այլն։ Դրանք թույլ կտան UNICOD-ի թույր հնարավորություններն օգտագործելով ստեղծել ինտերնետային կայքեր, գրքեր եւ այլն։ Ուրեն Յակոբյանի ասելով, այս ծրագիրը թույլ կտա հայ մշակույթը անցկացնել ինտերնետային եւ համակարգչային հենքի վրա, ինչից արդեն շուրջ 20 տարի հետ ենք մնում։

Յայալեզու էլեկտրոնային թովանդակության ստեղծումը ներկա պահին հրամայական է դարձել հատկապես կրթական ոլորտի համար, քանզի առանց հայերեն համակարգերի Յայաստանի դպրոցների համակարգչայնացումն ու ինտերնետ կապն ուղղակի դատապարտված են ձախողման։

## ՈՂԵԱՍ ՊՈՂՈԱՅԱՍ

# Ինքնահաստատման ճանապարհին Արմահիրի առաջին համալսարանը

Արմենուի Դևիլուսեամ

Երկիր դրախտավայրի սրտի մեջ՝ հնագոյն մի քաղաք, անունն Արմահիր։

Կրեւ այստեղ՝ տապոտայս հողերում, երեք թերը է հասցնում՝ քաղցր ու մեղրածոր, իսկը դրախտահամ։ Բայց սլաքը համար ասես քանոնով գծւած այս ճանապարհը, ափսոս, դրախտի դուռը չէ, եւ աջց ու ծախցից կարմիր կեղեւը շողանոր ոչ մի նունենի չկայ։ Ոչ նուռ, ոչ ծաղիկ, ոչ էլ նոյնիսկ՝ անտպուդ ծառեր... Ռէ, ժամանակը մեզ Ե՞րբ է հերիքել՝ դրախտադրներին հասնելու։ Յազի տառապել ենք աղուտների մեջ ու ծաք տւած ծեղքերով մի կերպ իրար կապել 4000 տարայ ընդհատ- ընդհատ թելերը, որ պատմութիւնը երկարի ու ծիր դարնա, որ չմնանք կեսանապարհին։

Դասականդ ասում է. «Գիտե՞ս ինչ, կեանք է եւ մի ակնկալիիր անփոթորիկ ծով եւ եթէ խորտակւում ես մեղք քոնց է եւ ոչ թէ փոթորկինը, քանի որ փոթորիկը ծովն է։ Ե՞ր է խարիսխուդ։ Խարի սխոդ ...» (Քրանտ Մարեւուսեան Մեծամոր)։

Այս մտքերի հետ մեքենան սլանում է Արարատի փեշերով, ու իհմա պիտի հասնենք Արմահիր, ուր ասուն են, խարսխման մասին մտահոգւղներ կան, եւ որոնց որոնածը այն նոյն պարանից է, որով դասականդ ինքը խարիսխ էր հիւսում իր պատմութեան մեջ անցաւորներիդ օրինակը, «Ապ մորթեցին ու մաշկեցին երկրի թույր արօաներն ու երինջները եւ առհասարակ թույր վայրի երեւուրը եւ, կաշիները թթելովստաք մոխրի մեջ արեւի տակ, բլուր առ բլուր մազաղաք արեցին, եւ այժի մազից պարան ոլորելով... իջան վարից անմատոյց, վերից անմատոյց քարայր՝ քննելու հունաց լեզի թերականութիւնը, եւ թէ ինչքան սխալ է հրեց կարծիքը նարդարնոյթ աստծու մասին եւ թէ...»։

Թէ ինչքան է սխալ այս կամ այն կարծիքը, արդեն 8 տարի Արմահիրում քննում են ինքնուրութիւն, իրենց խարսխմած դրախտացում։ Դպրանոցը, որ կոչւում է «Արարատ» համալսարան, վերջապես գտել է կառանելու վայրը եւ ակնախոռչաւոր շինութիւնը, եւ թէ ինչքան սխալ է հրեց կարծիքը նարդարնոյթ աստծու մասին եւ թէ...»։

# Հոգևորականութեաբ

կառոյցի վերածելով՝ հաւակնում է ռազմաւան կենտրոնը, որն իրոք մարզի երիտասարդութեան համար խարխաւոր նաև պիտի դառնայ՝ ուղղութիւնը պահելով դեպի մտքի հերուներ: Իսկ թէ ինչպէս է ցուրտ ու մութ տարիներին՝ 92-ից վեր, միևնույն արին առել համալսարանի գաղափարը, պատմում է համալսարանի ռեկտոր, աշխարհագրական գիտութիւնների եւ տնտեսագիտութեքն դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ եկոլոգիական ակադեմիայի իսկական անդամ, ակադեմիկոս, բազում գրքերի հեղինակ Արարատ Զաքարեաննը:

- Արմաւիրը, սկսած հնագոյն պատմութեան իր օրերից, մայրաքաղաքային իր փառաւոր ժամանակներից, համալսարան երեւէ չի ունեցել: Ներաւոր լեռների մէջ Տարեւ ուղաձոր ունեցել ենք, բայց այստեղ, այսքան պրպտուն երիտասարդութեան մէջ՝ ոչ: Ժամանակին՝ անցած 70 տարում, կեանքի լաւ պայմանները թոյ էլ չէին տայ այս մասին մտածելու: Երեւանը ամէն ինչի կետրոնն էր: Բայց իհնա կեսապայմանների վատազման հանգանքը ստիպում է նոր ուղիներ որոնն, որովհետեւ մօտիկ լինելով հանդերձ՝ կենտրոնը բնակչութեան ճնշող մեծամասնութիւնից սարսափելիօրէն հեռացել: Եւ եթէ չենք ուզում, որ ուսումը դառնա մայրաքաղաքուն մենաշնորհը, պիտի հոգանք, որ մարզերը չկորցնեն իրենց մտաւոր ներուժը եւ չվերածեն անգոյն ու անհետաքրրի ը ծայրամասերի:

- Այսինքն՝ երթեւեկութիւնը հակառակ ուղղութիւն պիտի ստանա:

- Փոխանակ երիտասարդութեան ծախսատար ելումուտի, որին գաւառինողը մեծ մասամբ ի վիճակի չէ, ելումուտը պիտի լինի մայրաքարից՝ դասավանդող ուժերի ներգրավմամբ, որ տեւէ դեպում հոգում եւ իր վրայ է վերցնում մեր համալսարանը:

Կարողացե՞լ էք ծեռաւորել համալսարանին վայրել դասախոսական անձնակազմ:

- Այո՛: Միայն տիտորսների թարկումն արդէն ընդհանուր պատկերացում կտայ. 5 ակադեմիկոս, 15 դոկտոր- պրոֆեսոր, 35 գիտութեան թեկնածու, դոցենտ: Իսկ, առհասարակ, համալսարանի դեմքը որոշում են շրջավարտները: Պատահում է նոյնիսկ, որ պյակտիկայի ժամանակ ուսանողի կարողութիւնները ճանաչելով՝ արդէն իսկ առաջարկներ ենք ստանում: Օրինակ ժուռնալիստիկայի ֆակուլտետ նոյնիսկ չունենք էլ, բայց ընդհանուր զարգացնութիւնը յաշի առնելով՝ տեղի հեռուստաընկերութիւնները մեր ուսանողներից 3 հոգու արդէն հրաւիրել են աշխատանքի: Շատ լաւ են իրենց դրսեւորում նաեւ տնտեսագիտականն ու իրաւաբանականն աւարտողները: Օգոստոսւն, լիցենզաւորում անցնելիս, ստուգող խմբի ուշադրութիւնը դա եւս գրաւեց: Չամոզած եմ, որ այս ոգեւորութեամբ ու պատախանաւութեամբ աշխատելով՝ մարզկենտրոնին շուտով կպարզեւենք հաւատարմագրած բուհ, որին պատրաստուուն ենք եռանդով:

- Ինչէ՞ս էք ընտրում մասնագիտացումները:

- Շուկայական հարաբերութիւնների պայմաններում կեանքը ինքն է թելադրում անհրաժեշտ ուղղութիւնները, նախօրոք Արմաւիրի մարզի բոլոր պայմանները վիճակագրուն

ուսումնասիրել էինք: Ծանր ու դժւար պայմաններում դրւեց համալսարանի իհնքը, բայց կային մարդիկ, որ վստահ էին վաղւայ օրւայ հանդէա բու չերկնչեցին ցուրտ ձմեռներից: Մեր ամենամեծ բաւկամը քըրք թլրորեանի անւան համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Աւետիք Մկրտչեանն է, ուն անմիջական օժանդակութեամբ էլ նախ իբրեւ տնտեսայիրաւագիտական համալսարանի մասնածիւլ, ապա իբրեւ առանձին կրթօջախ բացւեց մեր համալսարանը:

Խոզբնապէս 1992-ին բացեցինք 4 բաժիններ՝ իրավագիտութիւն, Ֆինանսներ եւ Վարկ, ծենարկութիւնների տնտեսագիտութիւն եւ կառավարում, տարրական կրթութեան մանկավարդութիւն: Այնուհետեւ՝ 1995-ին, աւելացրին եւս 4-ը՝ հայոց լեզու եւ գրականութիւն, անգլերէն, քիմիակենսաբանութիւն, ժուռնալիստիկա, սակայն վերջին երկուսը ուսանող շիաւաքրելու պատճառով այդպէս է չկայացան:

Մեկ առ մէկ շրջելով բոլոր լսարաններուն եւ ունկնդելով ուսանողներին, լինելով արդէն 8000 կտոր գիրք հաւաքագրած գրադարանուն, հնոաբանական եւ համակարգչային դասասենակներուն, հաւասիացանք, որ «Արարատ» համալսարանը արդէն իսկ մի կարեւոր ջահ է վառել Արմաւիր մարզակենտրոնուն եւ իր ուսանողներուն է հանրապետութեան լաւագոյն բուհերի շարքը: Սակայն ցաւոտ խնդիրների բախւեցինք այստեղ նոյնպէս:

Սանդած ու աւերակած նախկին ուսումնարանի համրակացարանի շենքը, ուր ժամանակին ապաստանել են նաեւ փախստականնել, շենք է դարձել տանջանքների ու ներդրումների գնով: Մինչեւ իհնա էլ չնորոգած վերին հարկը ցոյց է տալիս, թէ հ՞նչ քայլքայման եղրին է եղել կառոյցը: Իսկ իհնա բակում նաեւ խօսքային ջրիդր կայ ու առանձնացող պարիսապ: Շենքն այսօր ծառայում է միայն կրթութեան գործին, իսկ կողքի շինութիւնները, անտարերրութեան մատնած, շարունակում են քայլքայլ հարուցելով մարդկանց ախտոսանք:

Մեր շենքի պարագայում, ցաւոք, խնդիրներ ստեղծող մարդիկ մշտապէս գտնւում են: Ոչ պետականի խարանով կնքաւած այս բուհերը երեւի դեռ լուծման ենթակայ խնդիրներ շատ կունենանասում է պին Զարաբեանը, ուն ծանրակշիռ գիտական հետազոտութիւնները միայն ափսոսանք են հարուցում որ ննան գիտնականը արդիւնբերութեան մէջ իր խօսք դեռևս չի կարողանում գործիփոխել: Մենք պետութիւնից Ֆինանսական միջոցներ չենք ուզում:

Ընդհակառակը, կրթում ենք նրա քաղաքացիներին և մէծ հարկերը նուժելով՝ հարստացնում ենք պետական գանձարանը: Փառը Աստծո, արդէն ունենք նաեւ գործուն վանքով իրենց արդարացրած հարիւրաւոր շրջանավարտներ: 1997-ից հրատարակում ենք նաեւ մեր սեփական «Զահ» թերթը, որ դարձել է դասախոսների եւ ուսանողների մորթերի արտայայտման լաւագոյն միջոցը, բանատեղծական առաջին քայլերի յաստատողը, մնում է վերջնականորդն լուծել սեփական տարածքի ծնդիրը...

Այո՛, դրախտի դարպաններին միշտ է ուշ ենք հասնում: Դրախտում լինելու պատուվ հանդերձ՝ մեր տունը մեզ մի տեսակ դժւար, ցաւցնելով է տրտում: